Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Բյուրեղավան 07 դեկտեմբերի 2020թ.

2020 թվականի դեկտեմբերի 07-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2021 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի թեմայով:

Որոշվեց՝

հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2021 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան

Իսկականի հետ ճիշտ է՝

Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող,

համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Զ. Ապրեսյան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
	Ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողով 07.12.2020թ.	Դիտողություններ և առաջարկություններ չկան	ընդունվել է	----------